


ՊԱՅՄԱՆՔ

Յարեհան գին և Պոլսոյ հմր. 10 Մճ.
Պաշտպան 2 խրատ
վեցամս. և Պոլսոյ 5 Մճ.
Պաշտպան 1 խրատ
Օտար երկիրներու 50 Ֆր.
Պանդուխտան տողը մէկ անգամի հա-
մար 3 զուրուշ, երկու անգամի հա-
մար 2 զուշ և աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կըլ-
այ :
Խրատքանչիւր թիւ 40 խրատ արծ :



ԼՐԱՔԻՐ

ՀԱՆԱՊԱԶՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Գուրս զնացած լրագրաց ճանրու-
ծ ախրը խորագրութեան վրայ է :
Լրագրոյ վերաբերեալ նամակ
կամ որ և իցէ զրուծիւն խորագրի
— Յնորէին պիտի ուղղուի : Ղալա-
թիա Սանտրոքըլար ճառատէսի թիւ
198, Նորո խան : Մասիսի զրատէն
եւ կըլ :
Ճանրու ծախքը չվճարուած նա-
մակ չընդունիր :
Չտպուած նամակի յօդուած, եւ
եւ չեն տրուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՊԱՅՄԱՆՔՆԵՐ 19 ՅՈՒԼԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Մեծ-Եղարքոսական փոփոխու-
թեան վրայ տակաւին Եւրոպական
լրագրաց խորհրդածութիւններուն
լիովին տեղեկութիւն չունիմք : Բայց
լոնտոնայէն հեռագիր մը կը ծանու-
ցանէ թէ Անգլիական մամուլը խոյ-
րէտալին փաշայի անկման վրայ ցա-
կը յայտնէ, ներկայ փոփոխութիւնը
մնայուն չհամարիր, և կը կարծէ թէ
կ. Պոլսոյ մէջ Անգլիական աղբեցու-
թիւնը պէտք եղածին չափ զօրաւոր
չէ : Այս յայտարարութեան նայելով
կարելի է որ Անգլիոյ բարեկամական
դիրքն ոչ միայն անտարբերութեան
փոխուի, այլ և խիստ լինի թուրքիոյ
նկատմամբ : Արդէն Պ. Պոլսոյ վեր-
ջին ատենախօսութիւնն հաճելի տը-
պաւորութիւն մը չէր կրնար ունենալ
Օսմանեան ակումբներուն մէջ, և
թուրք լրագիրք մեծ գեղեցութեամբ
քննադատեցին զայն : Բայց վախճա-
լու կէտն այն է որ եթէ Անգլիա իւր
գիրքը փոխէ, քաղաքական փոփոխե-
րէն թուրքիոյ : Յունաստանի և Ե-
գիպտոսի խնդիրները կեցած են :
Կրնայ լինի որ Անգլիա Յունաստանի
առաւել նպատակաւ կերպիւ վար-
ւի : Մինչև ցարդ ուղղակի քաջալը-
րութիւն տուած չէր անոր և Եան-
տայի շնորհման կուսակից չէր, բայց
կարելի է որ Անգլիա իւր կ. Պոլսոյ
մէջ պէտք եղած աղբեցութիւնը
չունենալուն պատճառաւ : Հելլենաց
պաշտպանութիւն ընէ : Այս պարզա-
պէս ենթադրութիւն մ'է որ կրնայ
նաև ստոյգ չլինել, քանզի անտարա-
կոյն նոր նախարարութիւնն Արևմ-
տեան տէրութեանց դաշնակցութեան
ու բարեկամութեան բարձր արժէքը
կը ճանչէ : Բայց ապագայ փոփոխու-
թեանց դէմ ապահովութիւն չկայ,
ինչպէս որ Անգլիական մամուլն վերայի-
շեալ խորհրդածութիւնէն կրնայ տես-
նուիլ : Եգիպտական խնդրոյն մէջ
ուրիշ փառնք մը կը նշմարուի : Նոր
խտիվին ֆէրմանը տակաւին չըրկուե-
ցաւ : Կը կարծուի թէ նոր ֆէրմանը
տէրութիւնները դո՛ւ պիտի ընէ, և
այս պարագային մէջ խնդիրը կը լու-
ծուի : Իսկ եթէ այնպէս չլինի, Ռէ-
բուրիքը ձրաւանդ լրագիրը կը յայ-
տարարէ թէ ֆէրմանն 'ի բաց պիտի
թողուի, և Եգիպտոսի Բ. Դրան հետ
ունեցած յարաբերութիւնները տուր-
քին վճարման վրայ միայն պիտի կա-
յանան : Արդ՝ ֆէրմանն և Եգիպտո-
սի խտիվին մայրաքաղաքս գալով իւր
վեհապետին անձամբ իւր յարգանքը
մատուցանելն հպատակութեան կա-
րեւոր նշաններ են, որոյ բարձումը
Բ. Դրան շահուց վնասակար է : Յու-
սովի է որ ներկայ նախարարաց խո-

հեռութիւնն այսպիսի ցաւալի հաւա-
նականութեանց առաջը կ'առնու-
ն : Արևմտեան մեծ տէրութեանց բարե-
կամութիւնն ու համակրութիւնը պա-
հելով :

Հելլենական սահմանադրոյն վը-
րայ աղետամբաց կռիւներն անպա-
կաս են : Երեսն հոգիէ բաղկացեալ
ապստամբաց հրոսակաւ մ'Արապի
դաշնայն յարձակեցաւ, և բազմաթիւ
զիւզեր աւար առաւ, սակայն Օս-
մանեան զօրաց խումբ մը հասնելով
վրայ ժամ կռուէ ետև ապստամբը
դէպ 'ի Հելլենական սահմանը վա-
խան : Վախուցնել չափ մարդոցմէ
բաղկացեալ և լուս զինեալ հրոսա-
խումբ մ'ալ, ֆրիսթօ ֆօսթայի հը-
րամանին ներքև, քանի մ'օր սար-
սափելի աւարառութիւններ ընելէ
ետև, կայսերական զօրքէն պաշա-
րեցաւ, և մեծ մասը կռուով մեռան,
մնացեալներէն եօթն աւաղակը ի-
րենք զիրենք ժայռերէ վար դրոյրով
կտոր կտոր եղան, իսկ միւսները վա-
խան : Ապստամբաց գլուխը 'ֆօսթա-
վերադարձելով և դերել ինչապով Եան-
տայի հիւանդանոցը փոխադրուեալ է :
Աւաղակաց ձեռքը գրաւ եղած եր-
կու հոգի, որոցմէ փրկանք կը պա-
հանջեն, աղատեցան և իրենց հըրա-
ցաններն ու ռազմավարներն Օսման-
եան զօրաց ձեռք ինկան, որոցմէ 6
հոգի վիրաւորուած են : Նշկատէս
զիւզին կողմն ալ տասն աւաղակներ
բնակիչները կը կողոպտեն, բայց Օս-
մանեան զօրքը զանոնք յորուց, և
անոնց ձեռքը դրաւ պահուած թէօ-
տօր Բրիտիքի անուն ձերուին դա-
ստուան աղատեց : Եգիպտոսի կողմն ալ
ապստամբաց հրոսակաւներն անպա-
կաս են, և դուշէ այս կերպիւ կը
պաշտպանեն յիշեալ դաւառին վը-
րայ Հելլենական պահանջումներն :

ԲԱԹՄԱՆԻ ՅՐԷՆՔԸ

(Շար. և վերջ տես թիւ 2378)

Յօդ. 8. — Առաջին վեցամսին մէջ,
այսինքն մարտ 15էն մինչև սեպտ. 1
խնդրուած ամեն բաթմանի՝ ամ-
բողջ վեցամսեայ տրոյ վճարման են-
թակայ է :
Երկրորդ վեցամսին ժամանակ,
այսինքն սեպտեմբեր 1էն մինչև
մարտ 1 խնդրուած ամեն բաթմանի՝
միայն սոյն վեցամսեայ տրոյ վճար-
ման կենթարկի :
Թէ առաջին և թէ երկրորդ վեց-
ամսին մէջ տրուած ամեն բաթմանի
յաջորդ տարւոյ մարտ 1էն մինչև
ապրիլ 1 պէտք է 'նորոգի : Գանցա-
ռուք զոր յօդուածին մէջ տրամա-
դրեալ պատժոյ կենթարկին :
Յօդ. 9. — Առանց բաթմանի ու-
նենալու բաթմանի ենթակայ ար-

հետ մ'ի գործ դնող ամեն ոք ներ-
կայ օրինաց համեմատ պարտաւոր
պիտի լինի բանալ վեցամսին բա-
թմանի տրոյ կրկնապատիւր վճա-
րել : Նոյնը պիտի լինի նաև բաթման-
ի շնորհող ամեն անձի համար :

Բաթմանի ունեցող ամեն ոք, որ
սեպտ. ամսոյն մէջ բաթմանի տրոյ
երկրորդ կէտ չվճարէ, այդ երկրորդ
վեցամսին տրոյ կրկնը պիտի վճարէ :
Վերայիշեալ տրամադրութիւնը
'ի գործ պիտի դրուին 'նաև այն ա-
մեն անձանց նկատմամբ որք իրենց
'ի գործ դրած արհեստին յատուկ
երկոյ բաթմանի տարբեր բաթմանի
մ'ունենան :

Յօդ. 10. — Միւսնոյն ժամանակ և
միւսնոյն տեղ երկու կամ աւելի տը-
հետ 'ի գործ դնող ամեն ոք բա-
թմանի մէջ տուրք միայն պիտի վը-
ճարէ, որ ամենին բարձր տրոյ են-
թարկեալ արհեստին տուրքը պիտի
լինի :

Յօդ. 11. — Գանի մ'անձանց 'ի միա-
սին և մէկ տեղւոյ մէջ 'ի գործ դրած
արհեստը միայն մէկ բաթմանի տեղի
կուտայ թէ՛ յանուն բոլոր ընկերաց
և թէ՛ յանուն անոնց միջոյն :

Թէ՛ տարբեր և թէ՛ նման երկու
կամ աւելի արհեստներ 'ի գործ դը-
նող ամեն ոք, որ մինչև իսկ մէկ քա-
ղաքի կամ մէկ թաղի մէջ երկու
կամ աւելի տեղ բռնած լինի, այդ
արհեստից յատկացեալ տեղերուն
ամեն մէկուն համար ամբողջ բա-
թմանի վճարելու պարտաւոր է :

Յօդ. 12. — Ամեն բաթմանի ունե-
ցող պարտաւոր է իւր բաթմանի
ցուցնել երբ բաթմանի պաշտօնա-
տարք իրմէն ուզեն : Երբ բաթմանի
մը կորուստն օրինաւորապէս հա-
տատուի, միւսնոյն թուահամարով և
ձրիաբար ուրիշ օրինակ մը պիտի
տրուի :

Յօդ. 13. — Ինչ և իցէ պատճառ-
աւ բաթմանի տիրոջ փոփոխու-
թեան ժամանակ 'նոր տէրն իւր նա-
խորդին իրաւանց և պարտոց կը
յաջորդէ, և բաթմանի նորոգու-
թեան ժամանակ իւր անունը հին
տիրոջ անունն տեղ անցունելու
պարտաւոր է :

Ինչ և իցէ պատճառաւ արհեստ-
տին գաղութած ժամանակ, բաթման-
ի տուրքը բանած վեց ամսին վեր-
ջանալէն յետոյ այլ ևս չպիտի պա-
հանջուի :

Յօդ. 14. — Բաթմանի յատուկ
թուղթի վրայ կը գրուին և կ. Պոլսոյ
մէջ քաղաքապետութեան կողմանէ
և դաւառները վարչական ժողովոյ
կողմանէ կը տրուին :

Երկրորդ կարգի արհեստից յատ-
կացեալ բաթմաններուն կամ վաճա-
ռատանց վարձուց որոշումը կամ
հատուտութիւնը, վարձման վաւե-
րացեալ պայմանագրոց, կամ 'ի թէ

չկան՝ կարուածոյ վարչութեան տու-
մարաց, կամ 'ի թէ այն ալ 'չկայ՝ հը-
մուտ անձանց դնահատութեան մի-
ջոյալ կը կատարի :

Յօդ. 15. — Բաթմանի տրոյ վը-
րաբերեալ ամեն բողոք կ. Պոլսոյ մէջ
քաղաքապետութեան և դաւառաց
մէջ տեղական իշխանութեան պէտք
է ուղղուի դրով :

Յօդ. 16. — Ներկայ օրինաց դ'որ-
ծադրութեան վերաբերեալ ամեն
վեճ 'ի թէ՛ Պոլսոյ և թէ՛ դաւառաց մէջ
առեւտրական դատարանաց առջև
պիտի դատուի :

Յօդ. 17. — Բաթմանից ձեւն և
պատճէնը բնաւոր (գօշնայը) տեռ-
րակայ գործածութեան եղանակն և
տոմարակալութիւնը յատուկ կանոն-
նադրութեամբ մը պիտի որոշուին :

Յօդ. 18. — Բաթմանի ենթարկ-
եալ ամեն արհեստ՝ արհեստաւորու-
թեան (էսնաֆ) տուրքէն և թէմէթ-
ի իւր կաշուած տուրքէն ազատ է :

ԱՆԳԼԻԱ ԵՒ ԹՈՒՐԿԻԱ

Պ. ճօրճ Պարքի Անգլիայի գը-
րագէտն, որ երկար ժամանակ թուրք-
քիա բնակած և անցեալ տարի Պու-
ղարի վրայ կարևոր դերք մը հըրա-
տարակած է, հետեւեալ նամակը կը
գրէ թոյմը լրագրոյն, որոյ մէջ վեր-
ջերս հրատարակուած վաճառակա-
նի մը նամակին պարունակութիւն-
ները կը հաստատէ և ուշադրութեան
արժանի խորհրդածութիւններ կընէ :

«Տէր իմ»

«Երկուշաբթի աւուր թայմի
մէջ կ. Պոլսէն եկած նամակ մը կար,
որոյ հեղինակը «վաճառական մը», ըս-
տորադրութիւնը գործածած է : Չեմ
գիտեր թէ ո՞վ է այդ «վաճառականը»,
բայց իւր նամակն ուշադրութեան ար-
ժանի թուեցաւ ինձ : Քանի մը բա-
ռով թուրքիոյ վիճակն ընթերցողաց
առջև կը դնէ, և այն փաղաքական
աշխարհավարութեան տկարութիւնը
կը ցուցնէ, զոր Անգլիոյ կառավա-
րութիւնը Բ. Դրան հետ ունեցած
բանակցութեանց մէջ 'ի գործ կը դը-
նէր պարագայից բերմամբ :

«Գործին տեսականն այս է թէ մեք
Անգլիայի քա թուրքիոյ միակ անշա-
հատէր բարեկամներն եմք, և թէ ըստ
որում՝ մեք իմաստուն կառավարու-
թեան միջոցաւ կամ այդպիսի կառա-
վարութեան մը ներքև բարգաւաճ
վիճակի մը հասած եմք, կրնամք խոր-
հուրդ աւալ այնպիսի կառավարու-
թեան մը, որ իւր երկրին և իւր ժո-
ղովրդոց նպատակաւ ձեռնարկու-
թիւններէ ևս կեցած է : Սակայն
թուրքերը տարբեր տեսութիւն մ'ուն-
են իրաց վրայ : Ամենէն առաջ, ինչ-
պէս «վաճառականը» կընէ, անոնք՝

չառ խորիստ ցեղ մ'են : Պէտք է յա-
րել միտնդ տմայն թէ շատ ինքնաշա-
ւան ցեղ մ'են : Հետեւանքն այս է որ
տարեմեան գաղափարաց նկատմամբ
իրենց բնականաբար և պարկեշտա-
բար ընելիք առարկութիւններէն զատ
մասնաւոր տարեւթիւն մ'ունին ա-
նոնց դէմ : որք իրենց երկրին հա-
մար օգտակար կամ անօգուտ բան
մը կառաջարկեն իրենց : Արեւելեան
գաղափարք և Դրան աւանդութիւն
ներէն հարկ կը դնեն որ այդպիսի ըզ-
գայում մը վերջին ծայր քաղաքա-
վարութեան քողի մը ներքեւ ծածկուի :
որ երբեմն շատ անհաճոյ առաջար-
կութեանց իսկ հաւանութիւն տալու
նա կառնու : բայց թուրքերը դարձ-
եալ անիրաւ կը համարին զանոնք և
ոխ կը պահեն :

Եւ շատ կրտսարակուսիմ որ թուր-
քերն ընդհանրապէս զԱնգղիա բարե-
կամ համարին իրենց : Եւ թուրքիա
բնակելոյս յարմար առիթներ ունե-
ցած եմ անոնց գաղափարաց և ըզ-
գացմանց տեղեկանալու : և ստոյգ
է որ անոնք ներդացած են Անգղիոյ
ժողովրդեան դէմ, որովհետեւ կրսն
թէ մեք (Անգղիացիք) իրենց պատե-
րազմական տագնապներուն ժամա-
նակ գաւազնութիւն ըրինք, և իրենց
գոթութեան թիւններէն օգուտ քաղե-
լով իրենց երկրէն մաս մը մեր ձեռքն
անցուցինք : Անոնք կը հաւատան թէ
Անգղիական կառավարութիւնն իւր
շահուց համար միայն աւելի կամ նը-
ւազ բարեկամ է իրենց : Բայց երբ
կառավարութիւն մ'իւր բռնած աշ-
խարհավարութիւնն 'ի գործ դնելէ
կարգիլուի ժողովրդեան կամ անոր
մէկ մասին կողմանէ (ինչպէս Անգ-
ղիոյ կառավարութիւնը), թուրքերը
զայս իրաց բնական ընթացքին հա-
կառակ վիճակ մը կը համարեն և կը-
սեն թէ այդպիսի վիճակ մը կառա-
վարութեան խորհրդոց և կարծեաց
կարեւորութիւնը կորուստնել կուտայ :
Պէտք չէ կարծել թէ երբեմն նշանա-
ւոր անգղիացւոյ մ'իւր անձնական
ձրից միջոցաւ ձեռք բերած ազդե-
ցութիւնը բոլորովին տարբեր պարա-
գայից մէջ գործող ուրիշ անձանց
կրնայ փոխանցիլ : Թուրքերը կրսն
թէ կառավարութիւն մ'իրենց բա-
րեկամը լինելու համար, իրենց թըշ-
նամեաց թշնամի լինելու է : Ուրե-
մին ինչպէս կրնամք իրենց և Յու-
նաց միանգամայն ճշմարիտ բարե-
կամներ լինիլ, երբ այս վերջիններն
անիրաւ պահանջներ կ'ընեն և
մեզնէ պաշտպանութիւն կը գտնեն :
Թուրքերը վերջին պատերազմին հե-
տեանք երեւն երաժ բոլոր խնդր-
ներէն աւելի ատելութիւն կը ցուցը-
նեն այս Հեղինական խնդրոյն դէմ :
Զօրութեան առջև զիջանելու հարկը
կը հասկնան, բայց երբ խեղճ, տկար
և կրնայ ըսուիլ նաեւ անարդեալ
տէրութիւն մ'իրենց (Թուրքաց) չը-
փոթութեանց միջոցին բազում դը-
ժուարութիւններ յարուցանելէ յե-
տոյ՝ կեննէ փոխարինութիւն կը պա-
հանջէ պատերազմի չձեռնարկելուն
համար, այդպիսի բան մը զայրոյթ
կը պատճառէ թուրքաց : Յունաս-
տանի հետ կարգադրութիւն մ'ընե-
լու հակառակութիւններն աւելի կը
սաստկանայ սա ճշմարիտ բնագոյմով
թէ այդ կարգադրութիւնն առժա-
մանակեայ միայն կրնայ լինիլ :

« Ինչպէս որ «վաճառականը» կը-
սեն, բաղում բարենորոգմունք կան
զորս թուրքերը կրնան առանց դը-
քամի 'ի գործ դնել : Բայց անոնց հո-
գին ծարաւ է դրամոց, որ եթէ
ձեռք բերուի, բնականաբար փոքր
Ասիա չզիտի երթայ, ինչպէս որ վա-
ղող ջուրը չկրնար լեռան գլուխն ել-
նել : Թուրքիոյ մէջ գրամներն ու

գաղափարները դարձեւ 'ի վեր իրենց
հետեւած ճանրէն գարձնելու համար
հրաշք պէտք է, և ոչ այլ ինչ : փո-
քրը Ասիա Ստիւտին և անոր ար-
բանեկաց զօրք և դրամ մատակա-
րարելէ զատ դոյռութեան ուրիշ իրա-
ւունք կրնայ ունենալ : Ներկայէն
անդին նայիլ չկրնայ և փոփոխու-
թիւններէ չախորժող ժողովրդեան
մ'ապագայ օգնութեան խոստումներ
տալը չկրնար համոզել զայն, որ իւր
սխալ գաղափարները թողու և մեր
գաղափարներն ընդունի : Անքաղա-
քագիտական և նուստոսացուցիչ հա-
մարած բաներն չգործադրելու հա-
մար պատրուակ գտնելու ներդութիւն
չեն կրեր :

« Թուրք նախարարք այս կամայն
բանն ընելու համար իրենց վեհա-
պետն ու Տէրն համագլխեկցաւ ուրիշ
բանի կարողութիւն չունին : Շատ
անգամ ամենախիւր պաշտօնատար մը
փոխելու անկարող կը լինին, և ընդ-
հանրապէս կը պատահի որ անշուն
սիրելի մ'ամբողջ նախարարութենէ
մ'աւելի կարողութիւն կունենայ :

« Կառավարու-
թիւնը դիտէ վտանգը, և ապա-
ցոյցն այս է որ դաւառական և ու-
րիշ կառավարչաց և պաշտօնատարաց
վրայ մեծ արթնութեամբ կը հսկէ,
և երբ անոնք ազատական միջոցներ
ձեռք առնելով՝ չափէն աւելի ժո-
ղովրդականութիւն վաստկիլ սկսին,
անմիջապէս պաշտօնանկ կընէ զա-
նոնք, իսկ այժմ կառավարական դա-
տուն անկրակութիւնները, զինուո-
րագրութիւնը, վերջին պարտու-
թեանց և կորուստից պատճառաւ
զգացմանց վիրաւորումը, թափառիլ
ցեղերու պատուհան, ընդհանուր
աղքատութիւնն ու թշուառութիւ-
նը սաստիկ դժգոհութիւն պատճա-
ռած է ժողովրդեան : փոքր-Ասիա-
յէն իմ ընդունած մասնաւոր նամակ-
ներս կը ծանուցանեն թէ այդ կող-
մերը գործող վիճակն հետզհետէ կը
վատթարանայ, և ձեռք «վաճառական
մը» նամակագրին խօսքերը կատարե-
լապէս կը հաստատեն :

« Պաշտօնատարաց «կազմակերպ
աւազակութիւնը» առաջուրնէ աւե-
լի յայտնապէս և անսովորաբար 'ի
գործ կը դրուի, և անպաշտօնա-
կան աւազակութիւնն այժմ սովորա-
կան դարձած է մինչև իսկ այն
տեղեր՝ ուր առաջ անունն անգամ
չկար անոր : Տարակոյս չկայ թէ ժո-
ղովրդը դարմանալի կերպիւ հը-
լու և երկարամիտ է, բայց վերջա-
պէս կրնան իրենց այնպիսի պայթ-
ման մը տեղի տալ, որ զիրենք խո-
հեմութենէ և մինչև իսկ բանավա-
րութենէ զրկէ : փոքր-Ասիոյ, Մի-
ջագետաց և Հայաստանի մէջ ամեն
կարգի և ամեն աստիճանի մարդոց
և զօրականաց հետ ունեցած խօսակ-
ցութիւններէս կ'եզրակացնեմ թէ
ժողովրդեան խառնուածքն այն սա-
տիճան ձգտալ է որ փոքր պատ-
ճառ մը կրնայ երկիրն անիշխանու-
թեան մէջ ընկղմել, և ես այս կար-
ծիքը միայն ունիմ թէ մինչդեռ
Սուլթանն և իւր նախարարք Յու-
նաստանի հետ կը վիճին Եանեան ա-
ազատելու համար, անդին Անատո-
լուն կորսնցնելու վտանգի մէջ են : »

18 յուլիս ՃՕՐՃ Ա. ՊԱՐՔԻ

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Պէրլին 30 յուլիս .
Պէրլին կէս պաշտօնական լրագրեք
Խայրատին փաշային պաշտօնականութիւ-
նը Ռուսական աշխարհափարութեան մէկ

յաղթանակն և Անգղիական դիւանագի-
տութեան համար մեծ պարտութիւն մը
կը համարին :

Լոնտոն 30 յուլիս .
Օսմանեան նոր նախարարութիւնն
Անգղիոյ և Գաղղիոյ կառավարութեանց
խմացուց թէ Եգիպտոսի խորթ թէյիք
փաշային հաստատութեան հրովարտակին
խմագրութեանը նկատմամբ իրենց պա-
հանջած բոլոր բարեփոխութեանց հաւա-
նութիւն կուտայ :

Դրան ընդդիմացած և տակաւին պըն-
դած միակ կէտն այս էր որ Խորթին կըն-
քած բոլոր գաշնադրութիւնները Սուլթա-
նին հաւանութեանը ենթարկին . իսկ ա-
րևմտեան տէրութեանց առաջարկած
խմագրութիւնը կըսէր թէ այդ գաշնա-
դրութիւնը Ն. Վեհափառութեան հա-
ղորդուն : Երէկ տէրութեանց տեղեկու-
թիւն տրուեցաւ թէ Բ. Դուռն այս կէ-
տին վրայ ալ կը զիջանի և թէ Եգիպտոս
կան հրովարտակին խնդիրն այժմէն կար-
գաղթեալ կրնայ համարուիլ :

Արևմտեան տէրութեանց գլխաւոր
փաստն իրենց յառաջ բերած այս իրո-
ղութեան վրայ կը կայանար թէ Թուր-
քիոյ վճարուելիք Եգիպտական հարկն, որ
Անգղիոյ և Գաղղիոյ մէջ կ'ընելաւ Օսմ.
փոխառութեանց հիմը կը կազմէ, 1873ի
կայսերական հրովարտակով Եգիպտոսի
չորհուած արտօնութեանց պատճառաւ
աւելցած է, և թէ յիշեալ հարկը կըր-
նար իւր առաջին գումարին իջնել՝ եթէ
այս արտօնութեանց մին ջնջուէր, միան-
գամայն վերադառնալ փոխառութիւնը 'ի-
րենց երաշխաւորութիւնները կը կորու-
սանէին :

Լոնտոն 30 յուլիս .
Պաշտօնական Լոնտոն կապէթ լրագրե-
րը կը ծանուցանէ թէ Խլիքէթ հարիւ-
րապետը Կարնոյ և Քլէյթըն հարիւրա-
պետը վաճառ փոխ—հիւպատոս անուա-
նեցան :

Այս ————— հոգի հեռագիր
Լոնտոն 30 յուլիս .
Խորհրդարանը մինչև օգոստոս 16 պի-
տի դադարեցնէ իւր նիստերը :

Երեսփոխանաց ժողովին մէջ արտա-
քին գործող նախարարութեան խորհըր-
դական Պ. Պըքը ծանուց թէ Խորթի Նու-
պար փաշային արտաքսման հրամանա-
դիրն ետ առաւ :

Փիլիպէն կը ծանուցանեն թէ Սուր-
եւեան Բուլղարի մէջ միացած Ռուսական
վերջին զօրքերն յուլիս 24ին չոգեհաւ
նստեր են :

Պէրլին 30 յուլիս .
Վիլհելմին հափէն նաւահանգիստը պա-
տերազմական չոգեհաւառ մը մէջ թնդա-
նօթ մը պայթելով երեք մարդ մեռաւ և
տասնեկուս հոգի վիրաւորեցան :

Լոնտոն 30 յուլիս .

Օսմ. Բան.	41 41/46
Փոխ.	4865 45
»	4869 44 1/8
»	4871 36
»	4872 21 1/2
»	4873 43 1/8
»	Եգիպտ.
»	72 3/4
Անգլ. Բան.	97 13/16

Փարիզ 30 յուլիս .

Օսմ. Բան.	11.77 1/2
Գաղղ. Բան.	5 0/0 82.50
»	» Նոր
»	» 5 0/0 117.25

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ .
Իրֆան փաշան, որ քաղաքային
պաշտօնատարաց կենսագրութիւնը
չինելու պաշտօն ունեցող յանձնա-
խմբին անդամ էր, նոյն յանձնա-
խմբին նախագահ անուանեցաւ :

Աթէնքի Օսմանեան դեսպանա-
տան առաջին քարտուղար Ստեփան
Մէլիք Էֆէնտիին երրորդ կարգի
Մէհմետի պատուանշան տրուեցաւ :

Մայրաքաղաքիս Լէվընթ Հէրլա
լրագիրը Գաթիմունիի նախորդ կու-
սակալ Սայիտ փաշային Չէյթիւնի
խնդրոյն կարգադրութեան համար
արտաքոյ կարգի պատու իրակ ան-

ւանին հետեւեալ կերպիւ կը ծանու-
ցանէ իւր երէկուան թուով .

« Արքունեաց նախորդ Միշիք և
Գաթիմունիի կուսակալ Մէհմետ Սա-
յիտ փաշան երկուշաբթի առաւօտ
մայրաքաղաքս եկաւ և կարծեմք թէ
Հալէպ և անտի Չէյթիւն պիտի եր-
թայ տեղեւոյն Հայկական դժուարու-
թիւնը լուծելու, որ կայսերական
յատուկ ֆոմիսէր Մաղհար փաշային
և Նուրեան Էֆէնտիին ձախող ըն-
թացիկ պատճառաւ աւելի ծանրա-
ցած է քան թէ խաղաղցած : »

Վագրթ լրագիրը կը ծանուցանէ
թէ այս օրերս տէրութեան բոլոր
պաշտօնատարաց ամսական մը պի-
տի արուի :

Սիւրբէի Հիւմայունին համար
պէտք եղած գումարներն երմասկան
նախարարութիւնէն չվագֆի պաշտօ-
նատուր զրկուեցան :

Երէկ Խաւքէյի բնակիչներէն 2-
300 հոգի Բ. Դուռն երթալով, Կա-
մուրլին ներքո բանող չոգեհաւուց
խարխուլ վիճակին և վարչութեան
ինչ ինչ անկանոն գործերէն զանդա-
տող աղքատաբէր մը մատուցին Առա-
ջին նախարար Արիֆի փաշային, որ
խոստացաւ նախարարաց խորհրդին
ներկայել զայն :

Վագրթ լրագիրը կը ծանուցանէ
թէ նախորդ Մեծ-Եպարքոս Խայրատ-
տին փաշան իւր առողջութիւնը կաղ-
դուրելու համար 'ի մօտոյ Գաղղիոյ
Հանքային ջուրերը պիտի երթայ :
Նոյն լրագիրը կըսէ նաեւ թէ Ն.
Բարձրութիւնն երէկ նախաճաշի հը-
րուրեալ էր Գաղղիական դեսպա-
նատուր, բայց չէ ընդունել :

Արեւելեան Բուլղարի յանձնախում-
բին իւր վերջին նիստերէն միոյն մէջ,
Օսմանեան պատուիրակ Աւրմ փա-
շային խօսքերը լսելէ ետեւ՝ որոշեց
որ ըստ որում հեռագիրք միջադ-
գային հանգամանք մ'ունեն և թէ
միջադգային գործողութիւնը Բ. Դը-
րան վերապահեալ են, Արեւելեան
Բուլղարի հեռագրաց վարչութիւնն
ոչ թէ տեղական իշխանութեանէն այլ
Բ. Դըրնէ կախուած ունենայ :

Մօրնիկ Սթար անուն Անգղիա-
կան առեւտրական նաւն, որ Տրապի-
զօն կերթար վաճառք առնու, ե-
րեքշաբթի օրը ֆալաքի առջև ցա-
մաքն իյնալով խորտակեցաւ :

Երէկ զիշիւր Պէշիք-Տէրէի մէջ
ծագած հրդեհէն Օթէշ Կիւրօֆ ա-
նուն պանդուկը միայն այրեցաւ : Անգ-
ղիական, Ռուսական, Գերմանական
և Հելլենական դեսպանատանց չո-
գեհաւերն անմիջապէս օգնութիւն
դրեցին : Այրած պանդուկին մէջ
կը բնակէր Հելլենական սահմանա-
դրիւց խնդրոյն վրայ բանակցելու
համար Կ. Պոլիս եկած երկրորդ պա-
տուիրակ Պ. Պըպլա Արմէնի, որոյ
գոյքերուն մէկ մասը կողպատուեցաւ
հրդեհէն ժամանակ :

Լէվանթ Հէրալտ կը ծանուցանէ
թէ Բերայի Թարլա պաշի փողոցին
ետեւ Գարանիք անուն Տաճկի թա-
ղին մէջ բնակող յոյն ընտանիքի մը
նստած տունն երկու աւուր մէջ հինգ
անգամ հրկիզելու փորձ փորձուեւր
է, բայց չարագործք չեն բռնուած :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

է Ո Չ Ո Մ Ը Ո Ւ Մ Ո Ւ Մ Ի Է	
Երէկ իրկուս գոցուեցաւ	12.24
Այս առաւօտ բացուեցաւ	12.27
Կէս օրին	12.25

Ի Լ Ա Ն

Ներդառնալից շաբաթ անկարող իրեն հա-
նը աղիւղ ֆուրուսնալը իշուհն օթուղ
պին գանձարտան գըրդ պին դան-
թարա գատար շուրուկը մուգարդե-
րէսի վէճէ իր մուգարդե օրուհաւաք
ամանան պէճէր գանձարդ օն պիր
դուրուղ օթուղ փարսոյ օրարաք թա-
լիպի էօհտէսինաէ օրուղ թէմուղըն
եկրմի իւհիւննի բաղար իրթէսի կիւ-
նիւ գարարը գաթիսի վէրիւնէն ին-
տէն իթա իթմէյէ թալիպ օրուհարըն
եհմիւր մէղքիւրաէ Տարը Շուրայի
աւքէրիյէ կէլմէյէրի :

17 թէմուղ 1879

Պապը Սէրասքէրի

Ներդառնալից էրաք անկարողնա պիր
սէնէ դարթընաւ լուղուհի միւրտարը
թէպիւր օրուհաւաք իւղըն մուգարդե
օրուհաւաք թրիւրա զէյթուհուհն
միւնաքաւաք թէմուղըն եկիրմի
պիրիւննի ճիւղա իրթէսի կիւնիւ ին-
րա օրուհաւաքընտան իթա իթմէյէ
թալիպ օրուհարըն եհմիւր մէղքիւր-
աէ Տարի Շուրայի աւքէրիյէ կէլմէ-
յէրի իւն օրուհուր :

14 թէմուղ 1879

Պապը Սէրասքէրի

ՄՕՐԻՍ ԿԱՄ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

ԲԱՐՈՅԱՎԵՊ

ՏԻՒՆ Զ. ԳԱՐԱՆՅԷ

Թարգմանեցի Գալ. Սաթիւնի Գ. Հարէնց
Ըստ յանձնարարութեան Արթ. Գ. Վ.
Սրուանտեանցի

Ամեն կարգի անձանց համար աշ-
խատանքութեան և խնայողութեան
աղքու օրինակներ պարունակող սոյն
ընտիր բարոյալէս, որ 250 ութա-
ձալ երեսնէ կը բաղկանայ, մաքուր
ուղաւորութեամբ հրատարակուած
լինելով, խիստ դիւրագին, այսինքն
հատը մէկ քառորդ Մէճիտի կը ծախ-
ուի ամեն Հայ գրաւաճառաց քով :



ՋՐՀԱՆ

Ամերիկայի ջրհաններ
մեծ և փոքր, երկա-
թէ հաստառուն խող-
վաներով թէ ջրչեղը-
ներու և թէ խորունկ
հորերու համար աճան
գներով կը ծախուի, և
Պոլիս Ղալաթիա Մի-
նաստան և ընկերաց
Ամերիկայի մողաղան



ԿԱՐԻ ԳՐԻՄԻՐ

Փոքր և մեծ կոշիկներ անու-
ղով դարձող ու անքակ կար կարող
գործիքը ամեն տեսակ կար մեծ դիւ-
րութեամբ կը կարէ ու գինն ալ ա-
ժան է, երաշխաւորութեամբ կը տըր-
ւի, աւուրածները կը շտկուի ու կա-
րել չգիտողին դաս կը տրուի. կը
ծախուի և Պոլիս Ղալաթիա Միւնաս-
տան և ընկերաց Ամերիկայի մողաղան :

ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԼՆ

Կ. Ս. ԻԹԻԻՃԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ

ՂԱՆԱՐԱՆ ՆՕՐՕ ԽԱՆ

ՇԻՐՔԵԹԻ ԽԱՅՐԻԷԻ

ՇՈՒԵՆԱԿՆԵՐՈՒՆ ԵՐԹԵԻԵԿԻ ԺԱՄԵՐԸ

1879 ՅՈՒԼԻՍ 1 ԿԻՐԱԿԻ ՕՐԼՆ ՍԿՍԵԱԼ

ՄԻՆՁԵՆ ԵՐԹԻՍ 31

ԲԱՍՓՈՐԷՆ ԻՋՆՈՂ ՇՈՒԵՆԱԿՆԵՐԸ

Ժամ	Երբեք և Երբեք	Թի-
10 15	Ենթիմաշաղէն Մէղար. Պէյլը. Թար. Ենթիմ. Սթէն. 32	
11	Ենթիմաշ. Մէղար. Պէյլը. Թար. Պէյլը. Ենթիմ. 20	
11 30	Բ. Ա. Գալաթի. Ենթիմաշ. Մէղ. Պէյլը. Թար. Ենթիմ. 34	
12 30	Ենթիմ. Մէղար. Պէյլը. Թար. Ենթիմ. 18	
1 15	Ենթիմաշաղէն Մէղար. Պէյլը. Թար. Ենթիմ. 33	
2 15	Ենթիմ. Մէղար. Պէյլը. Թար. Ենթիմ. Սթէն. 32	
3 15	Բ. Ա. Գալաթի. Մէղար. Պէյլը. Թար. Ենթիմ. 20	
4 30	Ենթիմաշ. Մէղար. Պէյլը. Թար. Ենթիմ. Սթէն. 34	
5 30	Ենթիմաշ. Մէղ. Պէյլը. Թար. Ենթիմ. Ենթիմ. Բ. 33	
6 15	Ենթիմաշաղէն Պէյլը. Թար. Ենթիմ. Պէյլը. Ենթիմ. 4	
8	Բ. Ա. Գալաթի. Ենթիմաշ. Մէղար. Պէյլը. Թար. Ենթիմ. 19	
10 15	Մէղար. Պէյլը. Թար. Ենթիմ. Սթէն. 22	

Արեւելեան Գէլի

11	Արեւել. Գալ. Օրթա. Պէյլը. 25
11 30	Արեւել. Գալ. Օրթա. Պէյլը. 2
12	Պէյլը. Արեւել. Գալ. Օրթա. Պէյլը. 22
12 45	Արեւել. Գալ. Օրթա. Պէյլը. 25
1 15	Արեւել. Գալ. Օրթա. Պէյլը. 2
2	Արեւել. Գալ. Օրթա. Պէյլը. 12
2 30	Պէյլը. Արեւել. Գալ. Օրթա. Պէյլը. 25
3 30	Արեւել. Գալ. Օրթա. Պէյլը. 18
8 30	Արեւել. Գալ. Օրթա. Պէյլը. 2
10	Արեւել. Գալ. Օրթա. Պէյլը. 12
10 45	Արեւել. Գալ. Օրթա. Պէյլը. 2

Արեւելեան Երբեք

10 15	Պէյլը. Բալա. Գալ. Ա. Հիւսար. Գալ. Վանի. 12
11	Պէյլը. Բալա. Գալ. Ա. Հիւսար. Գալ. Վանի. 24
11	Արեւել. Վանի. Գալ. Վանի. 4
12	Պէյլը. Բալա. Գալ. Ա. Հիւսար. Գալ. Վանի. 17
1 30	Պէյլը. Բալա. Գալ. Ա. Հիւսար. Գալ. Վանի. 19
3 45	Պէյլը. Բալա. Գալ. Ա. Հիւսար. Գալ. Վանի. 24

Լրագրիւր ամեն օր կը հրատարակուի
բաց ի կիրակի և ամեն օրերէ :

Բաժանորդագրութեան տեղն է Գա-
լաթիա Սանաղըճըլար Ճատտէի թիւ
193, Նօրօ խան Մալիսի խմբագրատե-
նը : Իսկ գաւառացի մէջ հետեւեալ հոգա-
բարձուաց գրասենեակները :

ՋՄԻԻՈՒՆԻԱ. Ստեփանէ Գ. Տէմէն.
ՆԻԿՈՒՄԻՒԹԻԱ. Խոսրով » Եսիւնեան.
ՊՐՈՒՄԱ. Ստեփանէ Գ. Թանկէրեան.
ՌՈՏՈՍՔՈ. Արթ. Տ. Արիստակէս ա-
ւագ քահանայ Պէյլը.
ՍԱԲԻՍՆՈՒՊՈԼԻԱ.
ՍԱՄՍՈՒՆ.
ՏՐԱՊԵՐՈՆ. Ա. Եթմէնեան Եթմէնի.
ՍՄԱՍԻԱ.
ՍԵԲԱՍՏԻԱ. Նազարէթ Եթ. Յ. Խա-
թանալուեան.
ԵԻԳԻՍԻԱ.
ԲԱՐՔԵՐԻ և ՏԵՐՍԻՄ. Կիրակոս Եթ.
Ս. Ղազանճեան.
ԵՐԶԻԿԱ. Թադէոս Եթ. Բաղրատունի.
ԿԱՐԻՆ. Կարապետ » Զաքարեան.
ՄՈՒՆ. Միկայիլ » Փօթիկեան.
ՎԱՆ.
ԲԵՐԻՍԱ. Սեդրակ » Խարաճեան.
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. Թադէոս Եթ. Թա-
ճեան.
ԵԴԵՍԻԱ. Գեորգ Եթ. Ոսկերչեան.
ՄԱՐԱՇ.
ՅՕՔԵՍԱՆ. Պէյլը. Նազար և Պէյլը.
Եթ.
ՏԻԻՍ. Պ. Նիկողայոս Տ. Ղազանճեան.
ԿԱԼԿԱՆ. Պէյլը. Նազար և Պէյլը.

4 15	Գալ. Վանի. Ա. Հիւսար. Գալ. Վանի. Վանի. Պէյլը. 22
8 45	Պէյլը. Պէյլը. Բալա. Գալ. Վանի. Ա. Հիւսար. 25

ԿԱՍՈՒՐԱՔԵՆ ԵՆՆՈՂ ՇՈՒԵՆԱԿՆԵՐԸ

Ժամ	Երբեք և Երբեք	Թի-
12 15	Գալ. Վանի. Պէյլը. Գալ. Օրթա. Պէյլը. Վանի. Սթէն. 4	
12 30	Պէյլը. Թար. Պէյլը. Պէյլը. Ենթիմ. 32	
1 30	Պէյլը. Օրթա. Արեւել. Բ. Հիւսար. Պէյլը. 20	
2 30	Գալ. Պէյլը. Օրթա. Գալ. Արեւել. Պէյլը. Բ. Հիւսար. 34	
3 45	Պէյլը. Օրթա. Արեւել. Բ. Հիւսար. Ենթիմ. 33	
5	Պէյլը. Օրթա. Արեւել. Պէյլը. Բ. Հիւսար. Պէյլը. 49	
6 15	Բ. Ա. Գալաթի. Օրթա. Պէյլը. Վանի. Ար- 25	
8	Արեւել. Պէյլը. Բ. Հիւսար. Ենթիմ. Ենթիմ. Թար. Պէյլը. 22	
9 15	Պէյլը. Բ. Հիւսար. Պէյլը. Սթէն. Ենթիմ. Թար. 32	
10	Բ. Հիւսար. Ենթիմ. Ենթիմ. Թար. Պէյլը. Մէղար. 33	
10 30	Օրթա. Արեւել. Պէյլը. Բ. Հիւսար. Ենթիմ. 18	
10 45	Պէյլը. Թար. Պէյլը. Մէղար. Մէղար. Ենթիմ. 34	
11 45	Պէյլը. Բ. Հիւսար. Պէյլը. Ենթիմ. Ենթիմ. 49	

Արեւելեան Գէլի

12	Ուղղակի Արեւել. 25
12 30	» » 2
1 30	» » 12
2	» Պէյլը. 25
3	» » (Բալա. Թար. 18
7 30	Պէյլը. Օրթա. Գալ. Արեւել. 2
9 15	Գալ. Պէյլը. Օրթա. Գալ. Արեւել. 12
10	Գալ. Պէյլը. Օրթա. Գալ. Արեւել. 2
11 15	Գալ. Պէյլը. Օրթա. Գալ. Արեւել. 25
11 40	Պէյլը. Օրթա. Գալ. Արեւել. 2
12	Պէյլը. Օրթա. Գալ. Արեւել. Պէյլը. 22

Արեւելեան Երբեք

1 30	Բ. Ա. Գալ. Պէյլը. Վանի. Գալ. Ա. Հիւսար. 24
3	Բ. Ա. Գալ. Պէյլը. Վանի. Գալ. Ա. Հիւսար. 22
9	Գալ. Պէյլը. Վանի. Գալ. Ա. Հիւսար. 20
9 45	Գալ. Պէյլը. Վանի. Գալ. Ա. Հիւսար. 17
10 30	Գալ. Պէյլը. Վանի. Գալ. Ա. Հիւսար. 21
11 15	Գալ. Պէյլը. Վանի. Գալ. Ա. Հիւսար. 12
11 30	Գալ. Պէյլը. Վանի. Գալ. Ա. Հիւսար. 4

ԻԿՍԻՏԱՐ ԲԱՆՈՂ ՇՈՒԵՆԱԿՆԵՐԸ

Ժամ	Երբեք և Երբեք	Թի-
11	11 30	11 30
11 30	6 15	11 45
12	7	12 15
12 30	8 15	12 45
1	8 35	1 15
1 25	9 15	1 40
2	9 35	2 15
2 30	10	2 45
2 55	10 25	3 10
3 30	10 45	3 45
4	11 5	4 15
4 30	11 25	4 40
5 5	11 40	5 15
5 45	12	6 10

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

Ժամ	Երբեք և Երբեք	Թի-
11 30	5 25	11 30
12	6	12
12 30	6 35	12 30
1	8	1
1 30	8 40	1 30
2	9 20	2
2 30	10	2 30
3 5	10 30	3 5
3 45	11	3 45
4 30	11 30	4 30
5	12	5